ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՒ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՃԱՄՓԱԲԱԺԱՆԻՆ (Դիտարկումներ)

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ
karine.rafaelyan@mail.ru

ՆԱԽԱԲԱՆ

Հայ քնարերգութեան՝ ՀՀ անկախութեան շրջանին բնորոշ որակումները չեն կարող խստօրէն սահմանազատուել մինչ այդ եղածներից, քանզի անկեղծ ստեղծագործողը շատ էլ չի տրւում հասարակարգային, գաղափարախօսական պարտադրանքներին: Ու թէեւ ժամանակի թելադրանքով ստիպուած է լինում գրել այս կամ այն նիւթով, այս կամ այն յոբելեանի, քաղաքական իրադարձութեան մասին, միեւնոյն է՝ իր էութիւնից, իր ազնիւ յոյզից բխող ստեղծագործութիւններում նա ներկայանում է այնպիսին, ինչպիսին որ կայ՝ անկախ արհեստական ու արհեստածին երեւոյթներից:

Այս երկրորդ ուսումնասիրութեամբ դարձեալ փորձեցինք, նախորդի նման[1], որոշակի սահման գծել եւ անդրադառնալ մահկանացուներիս աշխարհը լքած միքանի հայ բանաստեղծի, որոնք ստեղծագործեցին խորհրդային եւ յետխորհրդային հասարակարգերի ճամփաբաժանին՝ բանաստեղծական երկնումների նիւթը քաղելով թէ՛ մէկից, թէ՛ միւսից:

Սահմանազատեցինք նաեւ այս բանաստեղծների ստեղծագործական կեանքի երկու շրջանները՝ մեր դիտարկումների ծիրում պահելով միայն յետխորհրդային տարիներին նրանց ստեղծած գործերը:

Բնական է, որ խորհրդային գաղափարական սահմանափակումներից զերբազատուած լինելու պարագան բանաստեղծներին հնարաւորութիւն է ընձեռել առաւել ազատ լինել իրենց ազգային ինքութեան, տասնամեակներով լռեցուած ցեղասպանութեան ցաւի անդրադարձներում, ինչպէս եւ անձնական ապրումի տիրոյթում լինել անբռնազբաս, ինչ-որ տեղ չարաճճի՝ չզգուշանալով նախկինում դատափետուող յոռետեսական տրամադրութիւնները, խորհրդային մարդու խստաբարոյ, օրինակելի նկարագրից շեղումները բանաստեղծական ներշնչանքի նիւթ դարձնելու մղումներից:

ԼԻՒԴՈՒԻԳ ԴՈՒՐԵԱՆ (1933-2010)

Իւրաքանչիւր մահկանացու, առաւել եւս գրողները, ունի իր երկրային կեանքին յաջորդող ոչ-երկրայինին առնչուող իղձեր, սպասելիքներ, մտահոգութիւններ: Գրողի, ստեղծագործողի մօտ դրանք ձեւակերպւում են զգացմունքի եւ խոհի միախառնումից ծնուած ասելիքի տեսքով: Լիւդուիգ Դուրեանն իր վերջին շրջանի գործերից մէկում այսպէս է արտայայտուել.

Թէ հող դառնամ...
Երանի թէ ցանեն վրաս
Մի բուռ ցորեն[2]:

Մարդկային ու բանաստեղծական երազանքի, իրականութեան ու երեւակայութեան խաչաձեւումների թրթիռներով բաբախող մի զարկերակ է Դուրեանի ստեղծագործութիւնը: Այն սիրոյ, հայրենիքի, գրի, մշակոյթի, ընտանիքի, բնութեան, գինու, ցասման, վրէժի գեղարուեստականացումն է՝ բանաստեղծութիւնների ու պոէմների հանդերձանքով: Դուրեանի քնարերգութիւնն ունի արտայայտչաձեւերի, բանաստեղծական լեզուաոճի մշտահնար տարրեր: Բանաստեղծական ներաշխարհի արտացոլքերում, որպէս պարտադիր նախապայման, երեւակւում են հետեւեալ "բնորոշիչները"՝ Աստուած, Արարատ, խաչ, եղէգ, խաչեալ Յիսուս, Վահագն աստուած, կռունկ, արագիլ, ագռաւ, գինի, շեր[3]:

Աշուն է, ուշ, եղէգները
Խամրել են, ու մէկն է կանաչ...
Կռունկ, կանաչ եղէգը քեզ,
Խաչ է դարձել, պահապան խաչ[4]:

Մակդիրների, համեմատութիւնների, փոխաբերութիւնների առատութիւնը երբեմն ստիպում է վերանալ բանաստեղծի բուն ասելիքից եւ տրուել մայրենիի շռայլ յորդումին, որում կողք կողքի շարուած են թէ՛ նուիրական ու թանկ, թէ՛ զազրելի ու ողբերգական իրողութիւնների գեղարուեստական գնահատումները. «ճայաձայն քամի», «բիւզանդական ափնաբերդեր», «ինքնութեան նախահաստատ տէր», «արնահոս յուզում», «լկտիութեան հաճոյք ճոխ», «ոսկէ սարսափ», «վագրի խենթավառ մորթի», «ոխակեռ եաթաղան», «խեւաչ[5] ձի», «յաւերժաձուխ օճախ», «դժոխաեռ թուրք», «եօթնագալար ցասում»:

«Մի Խմիր» բանաստեղծութիւնը յայտնի «Իտալացի Աղջկայ Երգը» բանաստեղծութեան վերամբարձ տրամադրութեան առօրէական կենսականացումն է: Բանաստեղծական թեման կենցաղային զրոյցից վերածւում է ազգային-հայրենասիրական կոչի.

- Չափածոյ կռիւն ու՞մ է պէտք,
Ու՞մ է պէտք ոխդ մտածող:
Զէ՞նք է պէտք առնել, հասկացիր,
Քո երգը երկիր չի՛ փրկի-
Դարձիր դու հիմա Արաբօ.
Հրազէ՞ն ցասումդ պրկիր...
Մենք ազգ ենք ջանքով յարատեւ,
Մենք ազգ ենք յոյսից ճառագող,
Որ լինենք անկախ՝ մեզ պէտք է
Հրազէն դիպուկ կրակող[6]:

Նմանօրինակ կոչերն ու յիշեցումները չունեն յատուկ հրապարակների ու լսարանների անհրաժեշտութիւն, դրանք կարող են հնչել ամէնուր եւ ամէն ժամ: Եթէ այս բանաստեղծութեան մէջ հայրենասիրութեան գաղափարը ներկայացուած է փոքր-ինչ թեթեւ, կատակային տրամադրութեան նրբերանգով, ապա «Մղձաւանջ», «Ոսկէ Սարսափ», «Պոլիս» եւ շատ այլ

գործերում տեսնում ենք մէկ այլ հայրենասիրութիւն, որի պատգամաբերն իր ազգի նահատակների յիշատակը խնկարկող սգացող բանաստեղծն է.

Վանքը դարձել է սգամայր, պատարագ է հեգում ողբի...
Քամին ցրում է մացառին ցնցոտիներ կմախք-որբի[7]:

Ողբասացութեանը զուգահեռ հասունանում է վրէժի ծարաւը. Բանաստեղծը վերածւում է ազգային դատին անդրժելիօրէն հաւատարմագրուած զինուոր-հայի: Մղձաւանջային տենդից արթնացումն անխուսափելի է: Եւ այդ արթնացումի վկայութիւններն են յատկապէս «Մաշտոց», «Ասք Հողի», «Կոչմամբ Գրաբար» պոէմները, ինչպէս եւ շատ բանաստեղծութիւններ:

Իսկ մարդիկ չեն կարող բնաւ
Եղեռնը յաղթութիւն կարծել:
Չե՞ն կարող մոռանալ մարդիկ
Այսքա՞ն եաթաղան ու... Տէր Զօր...
Ես բոլոր մարդկանց հայեացքում
Յասում եմ կարդում ու նզովք[8]:

Վրէժի ու դառնութեան կողքին նաեւ հայի խաղաղ կեցութեան, հոգեկան անդորրաւէտ վիճակի նկարագրութիւններն են՝ որպէս շառաչուն բարոյական ապտակ մեզ ազգովին բնաջնջելու ծրագիրը հեղինակած ճիւաղների երեսին.

Մի լայն փերեւից գլորուեց,
Ընկաւ ցողը սնդիկ:
Ուր որ է՝ հիմա մուժը կը ցնդի՝
Արարատներս կը երեւան,
Որպէս Ադամը, որպէս Եւան:
Իսկ ես...
Ոչ մի տեղ չեմ գնայ ես.
Այստեղ կը կանգնեմ ու կը նայեմ:
...ուրիշ ու՞ր գնամ...
Երբ որ այստեղից
Շուտով, շա՜տ շուտով
Արարատներս կը երեւան,
Որպէս Ադամը, որպէս Եւան[9]:

Բանաստեղծի խոհական, վերլուծական ոճը տեղ-տեղ դառնում է թեթեւախաղացկուն: Կեանքի փոքրիկ ուրախութիւնների անդրադարձումները ընթերցողին կտրում են հոգեկան ծանր ապրումների բեռից ու տեղափոխում՝ անդորրաւէտ մի աշխարհ: Այսպիսին են «Իմ Հեզաշուք Կատու», «Դեղձանիկ» բանաստեղծութիւնները:

Իմ հեզաշուք կատու,
Իմ լաւ, իմ խաւտ,
Ուշիմ տեսնում ես դու
Իմ սիրտը ցաւտ:
Նստում ես ու երկար
Ինձ վրայ նայում,
Հայեացքով իմ տկար

Սիրտն ես փայփայում:
Երբ դառնում եմ յուշիս
Տանջանքներին գերի,
Մօտենում ես յուշիկ,
Փարւում ոտքերիս:
Գիտես, որ ես որբ եմ,
Չունեմ մտերիմ,
Որ ես անտէր եմ ու
Դու ես տէրը իմ[10]:

Բնութեան գոյներն ու գծերը դառնում են բառ, բանաստեղծական քառեակը՝ բնապատկեր: Հայ բնաշխարհը երգի հանդերձանքով յառնում է ընթերցողի առջեւ, ու իրապատում հեքիաթի պատկերաշարը լուսէ ուղեծրով հրապուրում-կանչում է Դուրեանի տողերից.

Ծառեր, աշուն է, եւ դուք ձեր վարքով
Խարոյկներ էք յուզախռիւ եւ հեթանոս...
Եւ այս քամու առջեւ՝ նժոյգաձայն վարգող-
Անզուսպ քրքիջ էք ու խելայեղ հոսք[11]:

Երբեմն էլ բանաստեղծին պարուրում են իրարամերժ ապրումներն ու կասկածները: Նա դառնում է իր հոգեկան ցաւի դէմ անզօր, անպաշտպան եւ մտերիմ, կարեկից ընկերոջ պէս փորձում է հոգին բացել ինչ-որ մէկի առաջ, սիրտը դատարկել՝ գլուխը դրած նրա ուսին.

Իմ սիրտը անչափ ցաւում է, ախպէրս,
Չեմ ուզում դուդուկդ լռի,
Ես ոչ թէ գինուց, ես վշտից հարբել եմ,
Մոլորուել, հարբել եմ լրիւ[12]:

Սիրոյ թեմային անդրադարձումները բանաստեղծին տեղ-տեղ մերձեցնում են միջնադարեան տաղերգուներին.

Ա՜խ, նորից դուռդ բացուէր լուսնեակի շողքի վրայ,
Պառկէի նորից քո հին պարսկական գորգի վրայ:
Մէջքիդ պէս բարակավիզ կուլայով գինի տայիր,
Ասէի.- Կենա՜ցդ, սէ՜ր: Ու խալ-խալ դու ժպտայիր[13]:

Աւելի քան եօթտասնամեայ տարեգրութեամբ իմաստուն բանաստեղծի տողերից ու տողատակերից որսում ենք պատանեկան աշխուժութեան, դեռափթիթ հոգու կենսասիրութեան պոռթկումները, որոնք նրան հարազատ եւ ընկալելի են դարձնում տարբեր տարիքի ու հետաքրքրութիւնների տէր ընթերցողների համար: Դուրեանի բանաստեղծութիւնը համոզում է մեզ, որ բանաստեղծի համար չկայ տարիքային սահմանափակում, որ բանաստեղծը ամենաձեր տարիքում էլ կարող է յուզուել ու յուզել պատանուն, երիտասարդին յատուկ աւիւնով:

ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ (1943-2009)

Արմէն Մարտիրոսեանի քնարերգութեան թեմաները բազմազան են՝ Հայաստանը, «նորահարսի քօղով» իր քաղաքը՝ Երեւանը, Մեսրոպ Մաշտոցը՝ իր ծննդավայր Հացիկ գիւղով, բոլոր ժամանակների գրչակիցները,

բանաստեղծութեան վերածուող բառերը, անգամ Արմէն Մարտիրոսեանի եսը՝ ինքն իրեն ձօնուած շարականով, իր երկրին տիրած սատանաները, որոնք սպառել են Աստծոյ ողորմածութիւնը մարդու նկատմամբ, ինչպէս վկայակոչում է հետեւեալ քաղուածքը.

- Դու քո Աստծուց հիմա մի՛ աղերսիր ոչինչ,
միեւնոյն է՝ նա քեզ բախտ չի ողորմալու,
այն, ինչ տալու էր քեզ - շռայլ գրպաններից,
արդէն բաժանել է սատանային:
Այս դառնահամ երկրում իշխանութիւն եւ ուժ,
եւ զօրութիւն
նա յանձնել է վաղուց սատանային,
եւ քո բաժին Աստուած օրօրում է տխուր՝
ողորմութիւն տուող
դատարկ գրպանները թափահարելով[14]:

Արմէն Մարտիրոսեանի քնարերգութիւնն ունի իր անփոփոխ արտայայտչամջոցները՝ օրօրոց, մանկան ծնունդ, ճօճուող պարաններ, խոր վիհերը կապող շղթաներ, մանկութեան խաղալիք, մոռացութեան քամի եւն.: Ու կան խորհրդանիշեր, որոնք այս հեղինակի գրում նոր երանգ ու ենթախորք են բերում հայ բանաստեղծութեան. ի մասնաւորի՝ մեզ քաջածանօթ տէրեանական մէգ ու մառախուղի երազկոտ-քնարական բովանդակութիւնն Արմէն Մարտիրոսեանի մօտ դառնում է ցասման, չկայացած սպասումներից ծնուած ապրումի արտայայտչամիջոց.

Պատռում է մէկից եւ զնգում է ուժգին
վահանի պէս կարծր մառախուղը,
երբ բախւում է լեռան սուրսայր կատարներին,
եւ այրերում մթին արձագանգում է
զրնգոցը արծաթ,
եւ ճեղքերից նօսր,
ինչպէս պիրկ շղթայի օղակների միջից,
երեւում է հեռւում քնած ազատութեան աղօտ ուրուագիծը...
...եւ Արարատ սարի վիհ ու լանջի վրայ
մառախուղ է նստում անվերջաւոր,
սարը չի երեւում,
երեւում է հեռւում քնած ազատութեան
աղօտ ուրուագիծը՝
դարբինների ձեռքով ընդմիշտ շղթայակապ[15]:

Բանաստեղծութիւնը, երգը չնիւթականացնելու, այն ապրանքի չվերածելու դաւանանքին ապաւինելու խոստովանութիւն է «Ունեցած-Չունեցածը Մի Երգ էր» բանաստեղծութիւնը:

«Ինքնանկար» բանաստեղծաշարը յիշողութիւնների լուսեղէն շղթայ է գծում, որը բանաստեղծին տանում-հասցնում է իր մանկութեան օրրանը ու հագցնում «վերյուշերի շորեր»: Սոնա տատի, նրա նշաձեւ աչքերով հոր ներկայութիւնը ներհիւսուած նորածիններ օրօրող օճախի շնչին, որը տաք

է, ինչպէս երդիկից ծխացող ծուխը, որից նաեւ երկնքում բնակուող նախնիներն են տաքանում՝ ըստ Արմէն Մարտիրոսեանի:

Գրողի համար մահը պայմանական իրողութիւն է, եթէ այն առնչւում է ծնողների անձին: Նա բանաստեղծում է հանգուցեալ մօրն ու հօրը՝ նրանց հետ զրոյցի բռնուելով, ինչպէս կենդանի զրուցակիցների հետ: Ահա հօրը նուիրուած մէկ քառատող.

Ոչ մի գուշակ... ես գիտեմ՝ կը յայտնուես երազում՝
Հոգուս վրայ ծանրացած ցաւի ամպը ցրելու,
Հայր, ցերեկը հոգսի մէջ, քեզ չեմ տեսնում, չեմ խօսում,
Դու ցերեկները՝ մեռած, իմ գիշերուայ այցելու[16]:

Վերը յիշատակուած արտայայտչամիջոցների առատութեամբ է աչքի ընկնում Սիրուշ մօրը նուիրուած բանաստեղծաշարը.

Առանց քեզ, մայր, հիմա
յիշողութեան երկար այս պարանին
քո լուացքն է փռուած չհաւաքուած եւ չոր:
Չկտրուի՜ յանկարծ եւ չկորչի՜ յանկարծ
քեզ հետ կապող
իմ տեսլիքի միակ այս պարանը[17]:

Եւ ինչպէս որ յատուկ է հարազատի մահը իբրեւ որոշակիութիւն չընկալող իւրաքանչիւրին, Արմէն Մարտիրոսեանը եւս վերծանում է մօր անդրշիրիմեան առաքելութիւնը.

... քո հեռաւոր այգում անդրաշխարհի
դարձեալ նո՛յնը, նո՛յնն ես դու անելու,
դու հեռացար՝ այս ծեր արեգակին կպած
մեղքի պիսակ[18] *եւ բիծ լուանալու*[19]:

Անդրաշխարհի հետ հաղորդակցութիւնները չեն սահմանափակւում արիւնակից նախնիների շրջանակում: Մարտիրոսեանը յիշում ու իր բանաստղծութեամբ վերապրեցնում է Չարենցին՝ ոչ մէկ անգամ: Նրան նուիրուած «Մոմի Լոյսն է Ելնում Ծիածանի Սովոր» բանաստեղծութիւնը արքայական ծիրանու ոսկեփայլով է օծում նահատակ բանաստեղծի յիշատակը.

Վերադարձիր դու մեզ՝ որպէս աստեղնային
արձակուրդից եկած յարդագողի ճամփորդ՝
բազմած մեր քերթութեան յաւերժական սայլին,
որ ճանապարհ ունի ուղիղ եւ խորդուբորդ:
Եւ ո՞վ գիտի, գուցէ բախտ է աստեղնային,
որ ճանապարհը քո երկար քեզ չարչարեց,
որ բարձրանաս հոգսից առօրէական եւ հին,
իբրեւ կանա՜չ, կանա՜չ, իբրեւ կանա՜չ Չարենց:
Արքայական միայն գերեզմանի սովոր,
սովոր եւ կրելու վիշտը արքայաբար,
մենք հանում ենք մեր մէջ թաղուածներին բոլոր
եւ բաժանում մարդկանց մագաղաթեայ նշխար[20]:

Արմէն Մարտիրոսեանի բանաստեղծութեան բնորոշ չէ թեթեւ, խենթաւուն տրամադրութիւնը: Եթէ անգամ սիրոյ թեմային է անդրադառնում, դարձեալ մնում է վերլուծողի կեցուածքում.

... ջահելութեան փքուն խաղալիք է սէրը՝
սկզբում՝ իր ներքաշող ու բռնկուն բոցով,
յետոյ՝ կամաց-կամաց խուլ շիջանող,
յետոյ՝ կամաց-կամաց մանրափշուր ջարդուող:
Ես կանգնել եմ սիրոյ փլատակի կողքին՝
եւ թեւաթափ խոնարհ, եւ գլխիկոր[21]:

Բայց դատողութեան անքննելի ուժին ի հակակշիռ՝ Մարտիրոսեանի քնարական հերոսը ծարաւի է արկածների սիրոյ դաշտում, եւ մարտահրաւէր է նետում ասես կեանքին՝ պատրաստ ինքնայրումի.

Բայց դու արի նորից, իմ ծերութեան աղջիկ,
քեզ կանչում եմ այրուող ոսկորներիս ճիչով,
թող մոխրանամ մէկից ճարճատիւնով վերջին,
իսկ դու - դեռ տաք - քայլիր մոխիրներիս միջով[22]:

Բնապատկերն այս հեղինակի մօտ սոսկ պատկեր չէ, այլ բնութեան շարժումն ու փոխակերպումները վաւերացնող գեղագրութիւն.

Լեռան լանջերին գարունը կանաչ շաւիղ է բացել,
որը ձուլւում է հորիզոններին:
Թփերի խորքում միայնակ քամին քաղցից դողում է
եւ հասուն միրգ է որոնում ընկած տերեւների մէջ
եւ փոքրիկ սունկեր:
Թէ մերկ չլինէր քամին եւ քաղցած,
այս տերեւները չէին պոկուելու,
եւ չէր բացուելու շաւիղը գարնան[23]:

Մարտիրոսեանի բանաստեղծութիւնը ներկայի շարունակականութեան երազանքին է հետամուտ, ու թէեւ օրը նրան ներկայանում է իբրեւ «տաճար - հագած մութի սքեմը սուրբ», այսուհանդերձ նա սպասում է իրենից յետոյ տաճար եկող ուխտաւորին, որը պիտի նիւթականացնի իր ակնկալած շարունակականութիւնը.

...ամէն ապրող, ամէն մեռած զարթնել քնից
ու կանգնել է տաճար տանող խուլ հերթերում:
Եւ ես լուսնոտ ու դիւահար այդ ամբոխի
վերջը պահած սպասում եմ բախտին հլու,
կեանքի, մահուան մշտահոլով հերթափոխի:
Որ չլռեն զանգակները՝ անայցելու,
ո՞վ կը զարթնի - ինձ պէս լուսնոտ այդ թափորի
անդարձ հերթի վերջը ինձնից հարցնելու[24]:

Մարտիրոսեանի քնարերգութիւնը բազմադարեայ ժամանակների միջով կատարուող ճանապարհորդութիւն է յիշեցնում, որի կայանները տարբեր են՝ թէ՛ ժամանակացոյցով, թէ՛ իրավիճակներով, թէ՛ տրամադրութիւններով: Ոչ-հազուադէպ հանդիպող յուսալքումի, յոռետեսութեան նշանները, այնուամենայինիւ, նահանջում են ապագայի հանդէպ ունեցած նրա

հաւատի առջեւ, ինչի մի վկայութիւն էլ հենց վերջին մէջբերումն է, որում բանաստեղծը լիայոյս է, թէ կեանքի ու մահուան հերթափոխի մեէջ ինչ-որ մէկն անպայման գալու ու կանգնելու է իրենից յետոյ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ (1945-2013)

Յովհաննէս Գրիգորեանի բանաստեղծութեան մէջ գերիշխող է ծաղրը. նրա երգիծական ձաղկումներն ասես երկսայրի են, քանզի դրանք յետհարուածով գալիս-խփում է իրեն՝ հարուածողին: Իր ապրած ժամանակն ու իրականութիւնն են այդպիսին. սովորական մարդը, առաւել եւս հայ մարդը յայտնուել է խառնաշփոթի թիրախում, եւ դրա շուրջ դառն խորհրդածումները հետապնդում են գրողին: Գրիգորեանի սուր խօսքի ու հեգնոտ ժպիտի տակ անթաքոյց է նուրբ զգայութիւնների ներաշխարհը: Ամենափխրունը մարդկային սիրտն է, որը պարտադրուած է դիմակայել բոլոր աղէտներին: Բազմաթիւ հարուածներից բեկուած սրտով բանաստեղծն ապրում է համատարած տխրութեան թանձրոյթում, աշնան գերխիտ կենսատարածութեան մէջ: Նա որոնում է երջանկութիւն, թէեւ կանխաւ գիտի, թէ որքան խուսափուկ է այն.

Դժուար է երջանկութիւնը պահել երկու ձեռքով,
երբ աչքերիդ մէջ արցունքի կաթիլներ կան[25]:

Բայց թերթում ես նրա բանաստեղծական գրի էջերն ու գտնում երջանկութիւն ասուածի իր սահմանումները: Այն ներկայանում է հայրենիքի ու ծնողների տեսքով, որոնց հանդէպ գրողի կեցուածքը որդիական է ու հայրական, հովանաւորեալի է ու հովանաւորողի: Գրիգորեանն իր հօր եւ մօր կերպարները գծում է մեծ զգացմունքով, հնչեցնում հօր արտասովոր պատգամը, որն անգամ դարձել է ժողովածուի վերնագիր. «Երբեք Չմեռնես - Ահա Թէ Ինչ Կ'ասեմ Քեզ»:

Մի անբացատրելի քնքշութեամբ է քնարերգում Գրիգորեանն իր փոքրիկ, մանրակերտի չափ շօշափելի հայրենիքը.

Սա իմ երկիրն է - չափսերով այնպիսին,
որ կարող եմ վերցնել հետս,
թէ մի հեռու տեղ գնամ:
Փոքրիկ, ինչպէս ծերացած մայր,
փոքրիկ, ինչպէս նորածին զաւակ,
իսկ քարտէզի վրայ
ընդամէնը արցունքի մի կաթիլ...
Սա իմ երկիրն է - չափսերով այնպիսին,
որ ազատօրէն տեղաւորել եմ սրտիս մէջ,
որ չկորցնեմ յանկարծ...[26]:

Սրտաչափ, «նորածնի բարուրի» նման Հայաստանը տիեզերական սիրոյ չափումների մէջ է, եւ նրան ուղղուած ներբողները Գրիգորեանը երգում է յոտնկայս ու հպարտ: Բայց եւ չի մոռանում այդ կծկուած-փոքրացածի լայնարձակ ու յաղթական անցեալը յիշել, նաեւ իրեն բնորոշ երգիծանքով բնութագրել ներկան.

Ուղիղ մի կօշիկի չափ երկիր՝ ահա թէ ինչ էր մնացել
նախկին բաւականին ընդարձակ Հայաստանից.
ընդամէնը մի, այն էլ 29,8 համարի կօշիկի չափ երկիր,
եւ երկար տասնամեակներ արագիլի նման
մի ոտի վրայ ցցուած ժողովուրդ,
որն ահա արդէն երկու տասնամեակ է, ինչ պայքարում է
եւս մի կօշիկի չափ տարածութեան համար,
որպէսզի, ի վերջոյ, կարողանայ միւս բոլոր
ժողովուրդների նման
երկու ոտքով կանգնել
մայր հողին[27]:

Հայրենիքի նորօրեայ փորձութիւնների մէջ Գրիգորեանի բանաստեղծութեան մէջ առաւել ցաւագին տրոփում է արտագաղթ-աղէտի թեման: Գրիգորեանը «քամուց քշուած» իր հայրենակիցների համար երազում է հաստատուն հանգրուան, որի խարխլուած հիմքերի պատճառներն է նաեւ ցուցանում իր սուր տողերում.

20րդ դարի վերջին, ժամը 16ն անց 15 րոպէին,
հայ ժողովուրդը դուրս է եկել իր հայրենիքից
եւ այլեւս չի վերադարձել...
Արտաքին նշանները՝ բազմադարեան, բազմաչարչար,
տաղանդաւոր, աշխատասէր, համբերատար,
աչքերի մէջ անսահման թախիծ,
սիրտը կոտրուած մի քանի տեղից...
Տեսնողներին խնդրում ենք
շտապ յայտնել պառլամենտ,
որին մի քանի օրով ժողովուրդ է հարկաւոր
նոր ընտրութիւնների համար...[28]:

Հասարակական-քաղաքական կնճռոտ խնդիրներին անդրադարձները բացում են բազում փակագծեր, հասկանալի է դառնում արտագաղթի եւ այն ամբողջ վայրիվերումների պատճառը, որից կախուած՝ անզօր ճօճւում է անկախութեան ժամանակաշրջան ապրող հայ ժողովուրդը:

Պատերազմական թատերաբեմի վերածուած երկրագնդի ճակատագիրը տնօրինող բախտախնդիրների լպիրշութիւնը ստանում է հակիրճ ու դիպուկ գնահատական: Հայաստանը, աշխարհն առհասարակ երկու մեծ ջրբաժանով սահմանազատուած են. մի կողմում հարուստներն ու անձեռնմխելիներն են, միւսում՝ մարդիկ: Եւ այս հակամարտողների անհաւասար պայքարը սպառնում է համատարած աւերածութեամբ ու ամայութեամբ, որից չի փրկուելու ոչ ոք: Թէեւ բանաստեղծի մտազննումները ծաւալւում են աշխարհաքաղաքական ենթահողում, այդուհանդերձ նրա սիրտը առաւել ուժգին է բաբախում հայաստանեան թեմաների տիրոյթում: Մեզ մօտ ամէն բան իւրօրինակ է, անգամ ինքնասպանութիւնների ժամանակագրութիւնը՝ տնտեսական ճգնաժամի պայմաններում.

Ինչպիսի՜ խայտառակութիւն - մինչ ամբողջ

քաղաքակիրթ աշխարհում միլիարդա եւ
միլիոնատէրերն են ինքնասպանութիւն գործում,
մեզ մօտ դեռ թշուառներն ու ընչազուրկներն են
շարունակում իրենց նետել Կիեւեան
եւ զանազան այլ կամուրջներից ներքեւ...[29]:

Մեր իրականութիւնն առաւելագոյնս է խեղուած, մենք մաքսաւորների ու *ջիպ*աւորների[30] նորայայտ ցեղատեսակի զոհերն ենք.

...Սահմանային անցակէտում մեր մաքսաւորները
կալանաւորել են հարեւան երկրի
ազգութեամբ հայ երկու բնակչի,
որոնք փորձել էին իրենց սրտերում թաքցրած
մեծ քանակութեամբ սէր ու կարօտ
անցկացնել Հայաստան՝ առանց մաքսազերծելու...[31]:

Յովհաննէս Գրիգորեանի բառապաշարը խիստ կենսունակ է ու արդիական, նրա բանաստեղծութեան գաղափարական խորութիւնն ու խօսքի մակերեսային եզրոյթները ներդաշնակօրէն համադրելի են:

Այս բանաստեղծը կեանքի վերջին շրջանն ապրեց մահուան անխուսափելիութեան գիտակցումով եւ գրեց իր համակերպումի, մօտալուտ մահուանն ընդառաջ գնալու զգացողութիւնների մասին, փիլիսոփայօրէն հաշտուեց եւ անգամ երկխօսեց նրա հետ: Մահը նրա բանաստեղծութիւններում ներկայանում է որպէս թեմա ու ենթաթեմա՝ շաղախուած սիրոյ, հայութեան ճակատագրի, աստուածային իրողութիւնների նիւթին: Եւ ինչ խօսք, զուարճաբանի, ինքնաձաղկողի ոճը մնում է հաստատուն, ծիծաղելու եւ ծիծաղեցնելու վարպետութիւնը՝ նոյնպէս.

Ոչ դժոխքի ճամփան գիտեմ,- ասացի,- եւ ոչ էլ Դրախտի,
եսիմ ուր է տանում այս գնացքը վերջին, բայց, դէ,
հոգուս խորքում դեռ յոյսը չի մարել, որ գուցէ
Քաւարան ընկնեմ, իվերջոյ, մեդալ ունեմ Խորենացու[32]:

Ապշեցուցիչ սառնասրտութեամբ սեփական մահը նախագծող բանաստեղծը, միեւնոյն է, ունի իր յետմահու անհանգստութիւնը, որը տրոփուն երակի նման առկայ է ողջ բանաստեղծութեան մէջ. նա անվերջ անդրադառնում ու քչփորում է հայոց ճակատագրական խնդիրներն ու մերկապարանոց, քաղաքականացուած խօսքի սահմանագծերում յանգում համաժամանակեայ եզրակացութեան.

...անշարժ պառկել ես սեղանի վրայ,
այդպէս էլ չիմանալով, թէ ինչով կ'աւարտուեն
հայ-թուրքական բանակցութիւնները,
կը բացուե՞ն սահմանները, թէ՞ ոչ...
Թէեւ, ճիշտն ասած, դէմքիդ արտայայտութիւնից
պարզ զգացում է, որ խաչ ես քաշել
այդ հարցի վրայ եւ ձեռքերդ կրծքիդ խաչած,
վստահ, որ ամէն ինչ նոյնն է մնալու
այս հնամաշ հողի վրայ,

հեռանում ես մեզանից - մեր ունեցած
միակ բաց ու ազատ ճանապարհով,
որը երկինք է տանում...[33]:

Երկնքի ու Աստծոյ հետ էլ երկխօսելու իր կերպն ունի Յովհաննէս Գրիգորեանը: Այս դէպքում նա հետաքրքրասէր է, զարմացող, հետազօտող, անգամ՝ կարեկցող:

Եւ նայելով խառնամբոխի այս յարաճուն հեղեղին,
մեր Տէրը, որ միակ փառապողն էր
բոլոր աստուածների մէջ,
կը դառնայ նաեւ յուսահատուածը միակ,
թափ կը տայ ձեռքը,
կը շրջուի ու կը հեռանայ գլխահակ...
Եւ պատմութիւնը, որի սկզբում խօսքն էր,
կ'աւարտուի ծանր,
չափազանց ծանր լռութեամբ[34]:

Այդ լռութիւնը, իհարկէ, կը ճեղքուի բանաստեղծի անխուսափելի հետաքրքրասիրութեամբ.

Եւ հիմա, Տէր իմ, երբ ժամանակն է հաշտուելու
այս ամէնից բաժանուելու մտքի հետ չարագուշակ,
չընկնեմ հոգսերով եւ չմոռանամ հարցնել,
թէ այդ ի՞նչ զօրութեամբ ու հմտութեամբ ես կարողացել
արարել այս ամէնը
ընդամէնը մի շաբաթում,
որ այս էլ քանի հազար տարի է
մենք՝ քո իսկ յօրինած մարդ-արարածներս,
քանդում ու աւերում ենք,
ու ծայրը դեռ չի երեւում...[35]:

Փիլիսոփայելու, անընմբռնելին ըմբռնելու ճիգով բանաստեղծն անդրադառնում է թագաւորների, երկրաշարժների, բանաստեղծների, սիրոյ եւ այլ թեմաների: Ամենայուզական իրողութիւնը՝ սէրը, կարողանում է համադրել չափազանց առտնին, գետնամած նիւթին, համոզել, որ սա այն մարտադաշտն է, որտեղ բոլորը կռւում ու յաղթում են միեւնոյն զէնքով եւ պարտւում նոյնքան ցաւագին, մի բան, որ լաւագոյնս արտայայտուած է «Գեղարուեստական Միջոցառում Կանանց Գաղութում» բանաստեղծութեան մէջ:

Աշուն է: Բանտարկեալների համար սիրային եւ յատկապէս
բաժանման բանաստեղծութիւններ կարդալու
լաւագոյն ժամանակը:
Եւ ահա, սէր իմ, ես յիշեցի քեզ եւ կարդացի մեր կարճատեւ
հանդիպման եւ երկարատեւ բաժանման, հեռատոր աշնան մասին,
երբ ծառերը սովորականից շուտ տերեւաթափուեցին, եւ ես
թեթեւ հագնուած յանկարծ խորացայ ձիւն ու ձմեռուայ մէջ
եւ այլեւս չվերադարձայ... Յուզմունքից խզուած ձայնով
կարդում էի, եւ արցունքները գետի պէս հոսում էին
աչքերիցս, եւ յանկարծ նկատեցի, որ բարձր, ձայնը

գլուխները գցած, առանց ամաչելու լալիս են նաեւ
գոյնզգոյն լաչակաւոր մարդասպանները, գողերը,
աւազակները... Սովորական կանայք, որոնց, արդէն
գիտէք՝ որտեղ կարելի է հանդիպել...
Աշուն է: Առանց ամաչելու: Բարձր: Ձայնը գլուխը գցած
լաց լինելու լաւագոյն ժամանակը[36]*:*

Յովհաննէս Գրիգորեանը զուարճաբանի, կատակախօսի արտաքին շերտի տակ քօղարկում է անհուն տառապանքը, իրականութեան ողբերգականութիւնը: Նա ե՛ւ իր երկրի ու ժողովրդի, ե՛ւ իր անձնական ցաւի նկատմամբ չպարտուողի, չընկճուողի կեցուածքն է ընդունել՝ որպէս հակադարձում: Եւ ընթերցողը ոչ մի դէպքում չի կասկածում գրողի անկեղծութեան:

ՀՐԱՉԵԱՅ ՍԱՐՈՒԽԱՆ (1947-2016)

Հրաչեայ Սարուխանի բանաստեղծութիւնը նման է աղօթարանի, որը ծայր է առնում հայրենական ակունքներից: Նա հոգեկից է բոլոր մեծերին՝ Գողթան երգիչներ, Նարեկացի, Թումանեան, Ջիւանի, Տէրեան, Չարենց, Մահարի, Սեւակ, Գալշոյեան, Զահրատ, Մաթեւոսեան... ու նաեւ՝ Դանթէ, Լորկա, Դոստոեւսկի, Կերկեգոր, Բասէօ...

Սարուխանի բանաստեղծութիւնը սնւում է սիրոյ ապրեցնող երակից: Եւ սէրը հաւասարապէս քնքուշ ու անձնատրուած է թէ՛ կնոջ, թէ՛ բնութեան, թէ՛ տիեզերքի, թէ՛ Երեւանի, թէ՛ Վանաձորի, թէ՛ որոշակիութիւն ու եզրեր չճանաչող աշխարհի հանդէպ.

Ահա՛ Վերջը հեզանինջ:
Ահա՛ Սկիզբն անվախճան...
Չքանում ենք քեզանից
Ու յայտնւում, Աշխա՛րհ ջան[37]:

Բանաստեղծը բարձրաճաշակ յանգեր է կերտում ու նոյնքան բարձր ճաշակով հաղորդակցւում է ընթերցողի հետ սպիտակ տողերով: Թղթին է յանձնում ոսկեղենիկ մայրենիի ամենագողտրիկ ու վերամբարձ գանձերը ու միեւնոյն տողի, միեւնոյն բառակապակցութեան մէջ դրանց անսպասելիօրէն զուգադրում ամենակենցաղային, ամենաչոր բառ-եզրոյթը՝ բնաւ չառաջացնելով աններդաշնակութեան, անյարիրութեան զգացողութիւնը, որ կարող էր ենթադրուել նման դէպքերում.

Որտե՞ղ ես շնանում, խե՛ւ իմ մահ,
Մի լուր տուր՝ սթափ ես, թէ լակած...
Լռութիւնն ինձ խոցեց, եւ հիմա
Ժխորի գերին եմ լռակեաց...[38]:

Սարուխանի քնարն ունի իր մշտամնայ հերոսը՝ արբեմոլը: Չգիտես՝ ինչի՞ց է նա արբել. գինու՞ց, սիրու՞ց, ցաւի՞ց, կեանքի՞ց, թէ՞...: Եւ նոյնքան անհասկանալի ու անպարփակ է բանաստեղծի վերաբերմունքն իր քնարական հերոսի նկատմամբ՝ համակրա՞նք է, կարեկցա՞նք, հեգնա՞նք, չարախնդութիւ՞ն, համակերպու՞մ, համերաշխութիւ՞ն, թէ՞ պարզապէս հոգեկե-

ցութիւն: Սա ասես մի առեղծուած է, որի բանալին մեր՝ ընթերցողներիս ձեռքին է, եւ Սարուխան մարդն ու բանաստեղծը մարտահրաւէր են նետում մեր երեւակայութեանն ու մտքին.

Գնում էր:
Քրթմնջում ինքն իրեն:
Ոչ ձեռք կար,
Ոչ հին օր,
Ոչ կեպի...
Աշխարհում մի կէտ կար ինքնուրոյն,
Եւ ինքը... միջո՜ւկն էր այդ կէտի[39]:

Բանաստեղծի գլխաւոր արտայայտչամիջոցը գեղարուեստական պատկերն է: Պատահական չեն Ռոսլինի, Ռաֆայէլի, Լէոնարդոյի ոգեկոչումները եւ նրանց հետ պատկերային հոգեկեցութեան շերտերի ընդհանրութիւնը նրա բանաստեղծութեան: Շատ յաճախ Հրաչեայ Սարուխանի գիրը պարզապէս դառնում է գեղանկար.

Արտասուքի նման ժամն ընկնում է,
Ու այտերն է սրբում կէսգիշերը[40]:

Պատկերներն իհարկէ ինքնանպատակ չեն, դրանք բանաստեղծի ապրումի ու խոհի թարգմանն են: Բանաստեղծութիւնը կարդալիս նախ նկատում ես պատկերը, հիանում ու ներշնչւում դրանով, ապա սուզւում այն անյատակ խորութիւնները, որոնք բանաստեղծը թաքցրել է այդ գեղեցիկ պատեանից ներս:

«Ներկայացում» ենթավերնագրով «Անհեթեթ Երկիր» պոէմը խորհրդային անցեալի մռայլախորհուրդ ոդիսականն է, երբ սեւ թանաքով ճերմակ թղթի վրայ զարմանալի անկեղծութեամբ ստեր յօրինելը օրինաչափ էր ու հրամայական, երբ մարդկանց վրայ կախուած էր առանց յիշողութեան մեռնելու անէծքը, երբ դժուար էր Աստծուն արթնացնելը կամ յօրինելը, երբ մարդկանց ստուերներից ահաբեկւում էր անգամ սատանան.

Դժուար է յօրինել
Եւ դժուար է արթնացնել Աստծուն:
Նստարանները, որ թեք են դրուած,
Կը ձգուեն մի ուղղութեամբ,
Եւ չարչարուած երեկոն
Կը հանգստանայ մեր աչքերում:
Եւ փոշու պէս կը ցրուեն բոլոր կասկածները,
Երբ մեր ստուերները
Սատանային ահաբեկեն թփերի մէջ[41]:

Իհարկէ, այսպիսի իրականութիւնը քիչ հիմքեր է տալիս լաւատեսութեան համար, սակայն բանաստեղծը չի կորցնում լոյսին հասնելու յոյսը.

Դիմակների վրայով
Լռութիւնը քարշ տուեց յոգնած ոտքերը,
Եւ սենեակի հինգերորդ անկիւնում
Լոյսը վառուեց[42]:

Հրաչեայ Սարուխանին իրաւամբ կարելի է կոչել բառերի գիւտարար: Կարդում ես նրա յօրինած բառերը, բառակապակցութիւնները եւ զարմանում, թէ ինչպէս աւելի շուտ չեն գտնուել ու կիրառուել դրանք. այնքա՜ն հայերէն են, այնքա՜ն ճիշտ ու դիպուկ, որ հնարաւոր չէ փոխարինել ուրիշներով (գրահարս, անխորհրդավարժ, չանուանալքուել, մերկամնայ, օտարահոտ, այլաւազ, կերպակալել, աչքալոյծ, կուսախտ, ճպռաճաղանջ, խաչանաւ, սովետալուրջ, օրուայ մնանիւթ, խաչաչարչար օրեր, յուդայապաչ համբոյր, սատանապտուկ ստինքներ, լուսաճեմութեան եռանդ, էահոլով գոյարան եւն.): Արտասովոր է նաեւ խօսքիմասային գիւտերի շարքը, որ հաւանաբար լեզուաբանական բանաձեւումի կարիք է զգում՝ անԱնդրանիկ, անՆժդեհ, անՌիալտո եւ այսպէս շարունակ:

Սարուխանի բանաստեղծութիւնն ասես հին յունական դիցարանից մինչեւ Աստուածաշունչ, Նոյ ու «Հայր Մեր» ընդգրկող աղօթարան է: Գուցէ ինձ մեղադրեն բանաստեղծի աշխարհընդգրկումը նեղացնելու համար, բայց իմ խորին համոզմամբ սարուխանական աղօթքները մեկուսի ու փոքրիկ մատուռների համար են, ոչ թէ մարմարակերտ, մեծագմբէթ եկեղեցիների: Ահա «Կրկնաղերս» բանաստեղծութեան քառատողը.

- Տէ՛ր, իմ Տանը թող ինձ, որ սրտով իմ գառնուկ
Մատաղացու լինեմ, ոչ թէ եսիր,
Որ գծիկի տեղում էջմիածին-Գառնու
Հայոց ոգին յառնի խաչատեսիլ...[43]:

Ակնյայտ է, որ Հրաչեայ Սարուխանը հայ դասական քնարերգուների գիծն է շարունակում հայ գրականութեան մէջ՝ չկրկնելով, այդուհանդերձ, նրանց անցած ուղին: Նա աւանդական բովանդակությեանն ու բանաստեղծաշինութեանը մօտեցել է ստեղծագործաբար՝ իր ոճն ու բառանիւթը, իր գրողական երկնումի կերպն ստեղծելով հայ բանաստեղծութեան բազմադարյեայ ընթացքի հոլովոյթում:

ՀՐԱՉԵԱՅ ԹԱՄՐԱԶԵԱՆ (1953-2016)

Հրաչեայ Թամրազեանի վերջին շրջանի բանաստեղծութիւնները տպագրուեցին նրա մահից յետոյ՝ *Շղթայուած Օրեր* ժողովածուում: Ծանր հիւանդութիւնը, անխուսափելի մահուան գիտակցութիւնը, բնականաբար, պայմանաւորել են այս բանաստեղծութիւնների ասելիքն ու տրամադրութիւնը: Մահ երեւոյթը յաճախ որոշակի ու բառացի ներկայութիւն չէ այս բանաստեղծութիւններում, սակայն դրանցում ամփոփուած խոհաշարը դրա մօտալուտ ու անթաքոյց լինելութիւնն է յուշում:

Դեղատոմսերին գրուած բառերով
Միքանի օրում ես ձեզ կը բուժեմ,
Բոլոր հաբերը հիմա աւելորդ,
Ներարկումները արդէն անուժ են:
Յետոյ բառերն այդ երգեր կը դառնան,
Ինչպէս որ մինչեւ այսօր են դարձել -
Ու ես նրանց հետ կը վերադառնամ,

Այսպէս շատերն են եկել ու անցել[44]:

Սեփական մահը Թամրազեանի բանաստեղծութեամբ ներկայանում է ոչ թէ իբրեւ դատավճիռ, այլ մի ընդհանուր օրինաչափութիւն, իբրեւ անխուսափելիութիւն: Եւ այդ անխուսափելիի սպասման մէջ բանաստեղծն ասես մի գերակայ նպատակ ունի՝ իր ու ընթերցողի համար սահմանել բառի, երգի, օրուայ, աշխարհի խորհուրդները: Թամրազեանի քնարական հերոսը ո՛չ ողբերգակի, ո՛չ երգիծաբանի, ո՛չ դատապարտողի, ո՛չ դատապարտուածի է նման, ինչպէս յաճախ լինում է մահուան գաղափարին անդրադարձող բանաստեղծների պարագայում: Հրաչեայ Թամրազեանը մտածող է, փիլիսոփայ, որն իմաստնօրէն տնտղում է իր ու առհասարակ մարդ արարածի՝ վերջնագծին հասնելու եւ այն հատելու իրողութիւնները:

Ու կիզակէտը ամէնի Նա է-
Ու այրում է քեզ տենչն անկարելի,
Թէ ինչպէ՞ս պիտի Արարչին նայես,
Երբ անկարող ես նայել արեւին[45]:

Ասես ինքն իր հետ մէնակ է բանաստեղծը ու ոչ էլ ունի մէնակ չլինելու պահանջը: Նա օտարւում է իր եսից, կողմնակի հայեացքով զննում այդ եսն ու ինքն իր համար պատմում նրանից ստացած տպաւորութիւնների մասին: Երկատուած մի անձ է Թամրազեանի հերոսը, որի՝ իրարից զատուած երկու եսերը զննում-ուսումնասիրում են միմեանց, փորձում գոյակցել, ընդհանուր եզրեր գտնել, մտերմանալ, միաձուլուել: Բայց այդ միաձուլումը կատարւում է ոչ-յաճախ. հիմնականում նրանք ընթանում են զուգահեռ, կողք կողքի:

Մի օր ինքն իրեն - ասես հպանցիկ,
Հին օրագիրը ասես բացելիս՝
Դու քեզ տեսնում ես քեզնից առանձին՝
Քո իսկ սփուերի կողքով անցնելիս[46]:

Բացառիկ դէպքերում հիւանդութիւնը, ֆիզիկական տենդը առարկայանում են, դառնում շօշափելի ներկայութիւն.

Այսօր ես կանուխ արթնացայ քնից,
Ու սպասում են ինձ դեղահաբերն
Ու սրուակները - պիտի կրկնուի
Այս ամէնօրեայ վարժանքը – ապրե՛լ,
Կրկին շաղկապել օրերն անհաղորդ,
Հանգուցել մտքի թէլը կտրուած:
Կարկատել կեանքը ամէն առաւօտ.
Իբրեւ հատուցում այս է մեզ տրուած[47]:

Թամրազեանի բանաստեղծական աշխարհը կառուցուած է խորհրդանիշերից: Կարօտ, դիմակ, օրեր, ուրուական, արձան, բառ, սպիտակ թուղթ, հոգի, մարմին, երգ, քաղաք, վարագոյր, յիշողութիւն եւ այլ երեւոյթներ նրա մօտ վերացարկուելով իրենց որոշակիութիւնից, ներկայանում են իբրեւ բազմախորհուրդ, բազմաշերտ իմաստաբանութիւններ: Վարագոյրն, օրինակ, երկու անսահմանութիւն իրարից զատող խորհրդանշան է, մարմինն

ու հոգին՝ մե՛րթ միածուլուող, մե՛րթ (եւ առաւել յաճախ) տարանջատուող, հակադրուող եզրագծեր են, յիշողութիւնը տարուբերւում է կեանքի, նախակեանքի, յետկեանքի տիրոյթներում՝ չգտնելով հաստատուն տեղ ու հանգրուան բանաստեղծի մտածումներում, քաղաքը բանաստեղծի եսի հետ նոյնականացող երեւոյթ է, օրը՝ ողջ կեանքի խտացում-խորհրդանիշ:

Օրը ձգուեց - իբրեւ պարան
Ու ամէն ինչ իր մէջ առաւ,
Յետոյ դարձաւ օձագալար,
Յետոյ դարձաւ մի մղձաւանջ...
...գալարուելով եկաւ հեռուից
Ու կին դարձաւ ու կողակից,
Վերջում կառչեց մահուան կեռից,
Վերջում կախուեց իր օղակից[48]:

Ներանձնական պատկերների գերիշխանութիւնը տեղ-տեղ զիջում է արտաքին ազդակների պարտադրանքին: Բանաստեղծը, ինչ ֆիզիկական եւ հոգեկան վիճակում էլ որ լինի, մնում է գեղագէտ, դիտորդ, պատկերաւորող, յօրինող: Թամրազեանն այդպէս պատկերում ու վերծանում է ձիւնը, քամին, աշխարհը, Փարիզ քաղաքը.

Խուճապահար է եղել այս քաղաքը ծակոտկէն,
Քամիներն են կարկատում կարկտահար վերարկուն,
Մուրացիկներն են փորձում իր մերկ մարմինը կոծկել,
Յետոյ միայն ծակծկուած այդ վերարկուն են հագնում,
Որ փայլեր է արձակում, շողշողում է արեւից,
Իսկ քիչ յետոյ թիկնոցն իր անձրեւներն են լուանում[49]:

Ներանձնական յոյզերի աշխարհը լքելու մի ազդակ էլ 2016ի ապրիլեան քառօրեայ պատերազմն է դարձել բանաստեղծի համար: Այս թեմայով գրուած գործերում սեփական ցաւից, անձնական ողբերգութիւնից օտարուել է բանաստեղծը եւ տրուել հայրենիքի, ազգի, հայի պատմական ճակատագրի շուրջ խորհրդածումներին ու եզրայանգումներին.

Ամէն ինչի մէջ մահն է խառնուած,
Ամէն ինչի հետ մահն է մահանում,
Նա կենաց ծիրի մէջ է առնուած
Նա հեռանում է ու վերադառնում[50]:

Որքան էլ որ Հրաչեայ Թամրազեանի բանաստեղծութեան մէջ գերակայ է գաղափարական, վերլուծական շերտը, այդուհանդերձ, նա տրում է բառերի, բանաստեղծական գիւտերի մոգութեանն ու յօրինում ճշգրիտ, անքննելի եզրոյթներ (յարաձեւութիւն, անցահուն, թուախրձեր, յուշաշխարհներ, նօսրանիւթ, անժամութիւն, թողլքել, օդաքար, թուաշխարհ, հոգեքնար եւն.):

Թամրազեանի մօտ դժուար է զատորոշել բնաստեղծական պատկերը խոհից, բառախաղն ու հնչիւնախաղը՝ ներանձնական ապրումից: Նրա մտածողողութիւնը միագիծ չէ, երբեմն կարդում ես բանաստեղծութիւնն ու որսում գաղափարի, բովանդակութեան երկսայրիութեան նշաններ:

Թամրազեանն իր բանաստեղծութիւններով նաեւ փորձել է յիշատակի տուրք մատուցել մահկանացուների աշխարհն իրենից առաջ լքած գրչակիցներին՝ Սամուէլ Մկրտչեանին, Լեւոն Խեչոյեանին, Տանիա Յովհաննիսեանին, Հրաչեայ Սարուխանին, նաեւ՝ Արշիլ Գորկուն:

Հրաչեայ Թամրազեանը բանաստեղծում է յանգերով: Աւանդական ձեւի մէջ մատուցում է նորօրեայ բովանդակութիւն: Սովորաբար նման բովանդակութեան գործերը ժամանակակից բանաստեղծներից շատերը գրում են արձակ բանաստեղծութեամբ: Այնինչ Թամրազեանն ասես սկզբունքօրէն ապաւինել է պահպանողականութեանը, վճռել տուրք չտալ օրուայ անցողիկ հրամայականին. թերեւս սա էլ բանաստեղծական իւրօրինակ կամակորութիւն ու խաղ կարելի է դիտարկել: Եւ որպէսզի արձակ բանաստեղծութիւն կառուցելու վարպետութեան հարցում կասկածի տեղիք չտայ, այնուամենայնիւ, նաեւ այդպէս է գրում: Եւ ոչ այն պատճառով, որ բանաստեղծութեան բովանդակութիւնն ու բառանիւթն են դա պարտադրում, այլ որովհետեւ այդ պահին դա է ներշնչանքի թելադրանքը.

Մարդկային հայեացքն ամենափխուր գոյութիւնն է աշխարհում,
մէնաւոր մի ոգի, որը դուրս է գալիս վաղ առաւօտեան
ու այլեւս երբեք չի վերադառնում...[51]:

Հրաչեայ Թամրազեանն իր քնարերգութեան մէջ որքան էլ որ տուրք է տալիս միայնությեան, մեկուսացումի, ինքնամփոփուելու մղումներին, այդուհանդերձ չի կարողանում պատնէշել ինքն իրեն արտաքին աշխարհի անցուդարձերից, ի մասնաւորի՝ ազգային ճակատագրին վերաբերող խնդիրներից: Պարզապէս սա մի բանաստեղծ է, որին բնորոշ չէ իր ներաշխարհից դուրս կատարուողին բարձրաձայն շեփորումներով արձագանգելը: Ինչպէս որ սեփական ցաւն է ապրում նա խաղաղ, անցնցում զգացողութիւնների մէջ, այնպէս էլ իրենից դուրս եղածին է արձագանգում նոյն հոգեբանութեամբ:

ԱՐՏԱԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ (1969-2001)

Սիրերգութեան ինքնօրինակ դրսեւորման ենք հանդիպում վաղամեռիկ Արտակ Համբարձումեանի բանաստեղծութեան մէջ: Սիրելի կինն աստուածանում ու վեհանում է նրա քնարերգութեան բազմաշերտերում: Թւում է, թէ աննիւթեղէն, վերերկրային է այս էակը, արտասովոր՝ իր բնորոշումներով, սիրուելու կերպով.

Ես փնտրում եմ բայե՛ր,
որոնք քեզ կը բերեն իմ ցանկութեան լուրը[52],
Ես սիրում եմ ցաւով քեզ մասնատել
ու քեզ սիրել հերթո՛վ[53]:

Բանաստեղծի վերաբերմունքն իր քնարական հերոսուհու նկատմամբ ստեղծում է տպաւորութիւն, թէ մենք գործ ունենք ոչ-սովորական, ոչ-իրական, ոչ-հողեղէն մահկանացուի հետ: Բայց նոյնքան բանաստեղծական ու երազային է սիրելիի նկարագիրը հասարակ հայ կնոջ ընտանեկան, կեն-

ցաղային միջավայրում: Յաճախ Արտակ Համբարձումեանն իր երգերում բանաստեղծականացնում է հենց այդպիսի կնոջը՝ առօրեայ հոգսի, տառապանքի, չհասկացուածութեան եւ վիրաւորանքների համապատկերում: Այսինքն՝ չի վախենում երեւան հանել սիրոյ իրական պատկերը, չի փորձում քօղարկել սիրոյ փշերը.

Եւ ուշ գիշերով՝ հարբա՛ծ, յոխորտու՛ն,
Շշուացնելով մի երգ անհեթեթ՝
Դուռը կոտրէի ու մտնէի տուն
Ինձանից խելառ ընկերներիս հետ:
Ու քե՛զ տեսնէի, իմ յաւերժահա՜րս,
Անսահման սիրուց ապտակէի քեզ,
Ընկերներիս հետ բռնէի գրազ,
Որ տանն ինչ ունենք՝ հիմա կը բերես[54]:

Համբարձումեանի քնարերգութեան մէջ գերիշխող են անդրադարձումները մահուան, նրա առեղծուածային ու միաժամանակ գաղտնազերծուած խորհրդին: Զարմանալիօրէն սթափ, խոհական ու անլաց է Համբարձումեանի «մահերգութիւնը»: Անբացատրելի մի զգացողութեամբ նա կանխատեսել է մօտալուտ մահը եւ յօրինել նրա բանաստեղծական դիմանկարը:

Մահուան թեման փիլիսոփայօրէն ծանրութեթեւ անող բանաստեղծը ողբերգական ապրումների յորձանուտում է յայտնւում, երբ անդրադառնում է բանաստեղծի հոգու, ստեղծագործող մարդու եսի վերլուծութեանը:

Բանաստեղծի հոգին միշտ էլ փակ է մնում,
Նրան ծերացնում է հարազատ մայրն անգամ,
Նա մեռնում է, ինչպէս շախմատում է լինում,
Թագուհուն են խոցում, բայց զոհւում է արքան[55]:

Հայրենասիրութիւնն ու հայրենիքը բանաստեղծի համար որոշակիանում են, դառնում որոշակի անուններ՝ Զարենց, Վահագն Դաւթեան, Համօ Սահեան, Վահան Թամարեան, ազատամարտիկներ Մովսէս Գորգիսեան, Վահէ Բաղդասարեան, ծնողներ, ընտանիք:

Երբ երազն իր նուրբ ձեռքն է դնում
Ճակատիս այրուող մոմի բոցին,
Ե՛ւ արեգակի, ե՛ւ Զարենցի
Տառապանքներն են երկրում մնում:
...Ե՛ւ խրճիթներից, ե՛ւ գրքերից
Տխուր թռչում են անուն-անուն
Դէմքեր, որ Կարսի այգում քնում
Ու արթնանում են խու՛լ վէրքերից...[56]

Բայց եւ աշխարհը չի սահմանափակւում հայրենի եզերքի թանկ անուններով. վերջիններիս կողքին, իրենց բնութագրող «ներյարդարանքով», պատկերաշարը լրացնում են Վիւիրն Լին, Լորընս Օլիւիէն, Քլարկ Գէյբըլը, Լուի Արմսթրոնգը, Վան Գոգը, Մոցարտը: Համբարձումեանը «նկարում է» բանաստեղծական պատկերներ՝ բնորոշ ամենագունեղ կախարդական հեքիաթներին: Բայց պատկերի հեքիաթայնութիւնը չի ստեղծում անբնա-

կանութեան, արհեստականութեան զգացողութիւն: Բանաստեղծական տողերից կարծես յառնում է նրա ստեղծած դիւթական նկարը ու, թւում է, կարելի է ոչ միայն տեսնել, այլեւ շօշափել:

Մի յոգնած արեւ ուսապարկն ուսին գնում էր տուն,
Մի դեղնած տերեւ յենուած իմ յոյսին մտնում էր քուն[57]*:*

Կամ՝ *Աստղերի գինովցած քարաւանն իջնում էր գիշերի մէջքով,*
Ու հարբած մի աստղի գրպանից իմ հոգին ընկաւ երկիր[58]*:*

Եւ էլի մէկը՝ *Ինձ համար երազ է մնացել քեզ լուսնի կոնքերին դնելը,*
Երազս դարձել է արտասուք՝ իմ ցաւով ողողուած ըմպանում[59]*:*

Համբարձումեանի բանաստեղծութեան մէջ հանդիպում ենք հակադրութիւնների իւրատեսակ ներդաշնակութեան: Այստեղ կողք կողքի բառեր եւ հասկացութիւններ են, որոնք, թւում է, ոչ մի կերպ չպիտի յայտնուէին միեւնոյն հարթութեան վրայ (բիրտ նազանք, անգոյն աստղ, որբ թախիծ, սիրոյ բութ նողկանք, սպիտակ սուգ եւն.): Կեանքի վերջին տարիներին գրուած բանաստեղծութիւններում զգացւում են քաղաքացիական հնչերանգի դրսեւորումներ, հայրենասիրական, փիլիսոփայական խոհեր.

Ուրեմն ի՛նչ, ա՛զգ իմ,
Դէպի լեառն Արարատ,
Դէպի հող ու երկիր,
Չէ որ քեզ փրկել է մի օր Որդին,
Ուրեմն վե՛ր, ա՛զգ իմ,
Դէպի ուրիշ երկիր, որ մե՛րն է,
Դէպի Տապա՛նն անգին,
Չէ որ Արարատը այն նոյն լեռն է[60]*:*

Քննելով դրանք՝ կարող ենք ենթադրել, որ հասուն տարիքում Արտակ Համբարձումեանի սիրեգութիւնը պիտի ետ մղուէր եւ տեղի տար նոր բանաստեղծական երկնումների, նոր թեմաների առջեւ: Ահա թէ ինչ էր գրում նա մահուանից կարճ ժամանակ առաջ.

Մի կտոր ոգեղէն հաց ունեմ,
Կը ներէք, ուտելու եմ մէնակ,
Այսինքն, կարող էք չներել,
Ես արդէն ուտում եմ այն...[61]*:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Յետխորհրդային շրջանի քնարերգութիւնը հարուստ է, բազմազան, բովանդակութեան առումով չափազանց ընդարձակ է եւ բազմաբեւեռ:

Այս հեղինակներն իրենց գրողական ձիրքով, ոճով, ասելիքով չափազանց գրաւիչ ու ինքնատիպ էին դեռ խորհրդային ժամանակներում: Բնական է, որ գաղափարական կաղապարուածութիւնը, ժամանակի տրամադրութիւնները, իրականութեան համապատկերը, նրանց երիտասարդ տարիքը ենթադրում էր մի շարք առանձնայատկութիւններ՝ նրանց չափածոյի մէջ: Սիրոյ, բնութեան, մելամաղձութեան, պատմական յիշողութեան, հա-

ռազատ քաղաքի ու հայրենիքի թեմաները իրենց իւրօրինակ արտացոլումն էին գտնում նրանց երկերում: Եւ յաճախ պատահում էր այնպէս, որ անձնական ապրումի տիրոյթում տեղ էին գտնում խորհրդանշական պատկերներ եւ բովանդակութիւն, որոնք խորքային իմաստով աւելին էին, քան ներկայացուած էին տուեալ ստեղծագործութեան արտաքին ձեւի մեջ:

Օրինակ՝ Էդոյեանի «Մեծ Արջի Թաթերը» բանաստեղծութեան բնապատկերի խորքում խորհրդային կայսրութեան մեծ բաղադրիչի՝ Ռուսաստանի այլաբանութիւնն ենք գտնում.

...Գիշերը մեզ պահում է փակ դռան առաջ,
եւ ուղիղ մեզ վրայ
երկնքից կախւում են Մեծ Արջի թաթերը[62]:

Գրիգորեանին այս շրջանում եւս բնորոշ էր երգիծական վերաբերմունքի կիրառութիւնը ամենալուրջ թեմաներին անդրադառնալիս անգամ: Քծնող մարդու բանաստեղծացումն այսպիսի դրսեւորում է ստացել նրա մօտ.

Հարկաւոր է մտածել վաղուայ օրուայ մասին,
ասաց հարեւանս
եւ եւս մի արկղ օճառ խցկեց պահարանի վերին դարակը[63]:

Մելամաղձոտ, յուսահատ տրամադրութեան կայուն շերտ կայ Սարուխանի չափածոյում: Եւ դարձեալ այն խորքային է, ոչ-ներանձնական.

Անձրեւն անցնէր, ու մամուռը փայլէր պատին:
Մի թռչուն գար ու ժամերով պատին նստէր:
Ու աչքերում յառնէր պատկերն Արարատի...
Համբերութի՜ն տուր թռչունին, Երկնայի՛ն տէր[64]:

Նոյնքան խորհրդանշական է Շեկոյեանի սոնէտը, որում վեր է հանւում մարդուն պարտադրանքի ենթարկելու, թեւաթափելու գաղափարը.

Այս աստիճաններն այնպէս են շարել
որ քայլ անելիս վերեւ չնայես:
Այդպէս գլուխկախ ընթանում եմ ես
Եւ դեռ չեմ տեսել երկինք ու արեւ[65]:

Բոլորի մօտ միշտ ներկայ է Արարատը՝ իր ֆիզիկական եւ հոգեբանական նկարագրով: Այն յիշողութեան, կարօտի, փրկութեան, հաւատի, վրիժառութեան խոհերի խտացում է դառնում: Զորօրինակ.

Ծաղիկ՝ ծաղկի վրայ: Եւ քար՝ քարի վրայ:
Եւ սա քաղաք չէ սոսկ - մոլորակ է յոյսի:
Մեր պատկերն է Լեռան յարիր ֆոնի վրայ:
Մեր պատկերն է՝ հունցուած այս աշխարհի լոյսից[66]:

Կամ՝ *Մինչդեռ, Լեա՜ռըն իմ նախնեաց,*
Կանխաձայն եմ լսում ես...
Բիբլիական դուռդ բա՛ց,
Նոյի նման մտնեմ ներս[67]:

Անկեղծ, խաղացկուն, յուզառատ, երբեմն նաեւ զուարճաբան են դառնում այս բանաստեղծները սիրոյ քնարում: Ահա մի քաղուածք Շեկոյեանից.

Սէ՞ր ասացի: Ա՜յ թէ բառ է:

Հընարել ու քաշուել են կողմ:
Իր համար կայ - անմեղ գառ է,
քանի քեզ չի դարձրել հող[68]:

Այս հեղինակների մէջ ոմանք (Էդոյեան, Յարութիւնեան, Թամրազեան) խորհրդային շրջանում առաւելապէս իրենց գրական ձիրքը դրսեւորեցին գրականագիտութեան եւ թարգմանութիւնների սեռերում, միաժամանակ բանաստեղծելով՝ անմասն չմնալով հայ քնարերգութեան ընթացքից:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Տե՛ս՝ «Յետխորհրդային Շրջանի Հայ Քնարերգութեան Միքանի Պատկեր», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԸ.*, 2018, էջ 467-86:
[2] Լիւդուիգ Դուրեան, *Կեանք Իմացեալ*, Երեւան, 2008, էջ 32:
[3] Ժողովրդական երգ, բանաստեղծութիւն:
[4] Նոյն, էջ 74:
[5] Խենթ աչք ունեցող:
[6] Նոյն, էջ 104:
[7] Նոյն, էջ 138:
[8] Նոյն, էջ 139:
[9] Լիւդուիգ Դուրեան, *Մեր Տարիքն Արարատն է*, Երեւան, 2006, էջ 88:
[10] Դուրեան, *Կեանք Իմացեալ*, էջ 328:
[11] Նոյն, էջ 263:
[12] Նոյն, էջ 177:
[13] Նոյն, էջ 333:
[14] Արմէն Մարտիրոսեան, *Սիրոյ Շղթայ*, Երեւան, Նայիրի, 2003, էջ 58-9:
[15] Նոյն, էջ 57:
[16] Արմէն Մարտիրոսեան, *Ներաշխարհի Լռութիւն*, Երեւան, ՀԳՄ, 2008, էջ 129:
[17] Նոյն, էջ 122-3:
[18] Նիշ, պուտ, բիծ:
[19] Նոյն, էջ 123:
[20] Մարտիրոսեան, *Սիրոյ*, էջ 22:
[21] Արմէն Մարտիրոսեան, *Արգէլուած Պտուղը*, Երեւան, ՀԳՄ, 2005, էջ 5:
[22] Մարտիրոսեան, *Սիրոյ*, էջ 20:
[23] Նոյն, էջ 35:
[24] Նոյն, էջ 207:
[25] http://granish.org/hovhannes-grigoryan/ :
[26] Նոյն:
[27] http://www.cultural.am/hy/gradaran/grakanutyun/yerbeq-chmernes :
[28] Նոյն:
[29] Նոյն:
[30] Թանկարժէք Jeep մեքենաներ վարողներին նկատի ունի հեղինակը:
[31] Նոյն:
[32] http://www.cultural.am/hy/gradaran/grakanutyun/yerbeq-chmernes-ashnan-hin-tetreric :
[33] http://www.cultural.am/hy/gradaran/grakanutyun/yerbeq-chmernes :
[34] Նոյն:

[35] Նոյն:
[36] Նոյն:
[37] Հրաչեայ Սարուխան, *Ի Տրիտուր*, Երեւան, 2005, էջ 140:
[38] Նոյն, էջ 79:
[39] Նոյն, էջ 26:
[40] Նոյն, էջ 140:
[41] Նոյն, էջ 108:
[42] Նոյն, էջ 315:
[43] Նոյն, էջ 28:
[44] Հրաչեայ Թամրազեան, *Շղթայուած Օրեր*, Երեւան, Նայիրի, 2016, էջ 379:
[45] Նոյն, էջ 199:
[46] Նոյն, էջ 132:
[47] Նոյն, էջ 196:
[48] Նոյն, էջ 92:
[49] Նոյն, էջ 334:
[50] Նոյն, էջ 362:
[51] Նոյն, էջ 286:
[52] Արտակ Համբարձումեան, *Սպասի՛ր Ինձ, Տէ՛ր*, Երեւան, 2009, էջ 70:
[53] Նոյն, էջ 150:
[54] Նոյն, էջ 44:
[55] Նոյն, էջ 128:
[56] Նոյն, էջ 109:
[57] Նոյն, էջ 48:
[58] Նոյն, էջ 103:
[59] Նոյն, էջ 19:
[60] Նոյն, էջ 502:
[61] Նոյն, էջ 267:
[62] Հենրիկ Էդոյեան, *Այժմ Եւ Միշտ*, Երեւան, Սովետական Գրող, 1987, էջ 19:
[63] *Գարուն ամսագիր*, 1987, թիւ 1, էջ 23:
[64] Հրաչեայ Սարուխան, *Վկայութիւններ*, Երեւան, Խորհրդային Գրող, 1989, էջ 5:
[65] Արմէն Շեկոյեան, *Բախտ*, Երեւան, Սովետական Գրող, 1987, էջ 46:
[66] Արմէն Շեկոյեան, *Թուղթ Ու Գիր*, Երեւան, Խորհրդային Գրող, 1990, էջ 262:
[67] Հրաչեայ Սարուխան, *Վկայութիւններ*, էջ 8:
[68] Շեկոյեան, *Բախտ*, էջ 69:

ARMENIAN POETRY AT THE SOVIET/INDEPENDENCE CROSSROADS
(Summary)

KARINE RAFAELYAN
karine.rafaelyan@mail.ru

The paper highlights the main themes and moods of Armenian poetry and poets at the crossroads of the Soviet and independence era of the Republic of Armenia.

The author focuses mainly on Ludwig Duryan, Armen Martirosyan, Hovhannes Grigoryan, Hrachya Sarukhan, Hrachya Tamrazyan, and Artak Hambardzumyan, who were inspired by the past and current history of Armenia, diverse geopolitical events, topics related to nature, love, pain, death, various aspects of human existence, everyday life concerns and the challenges of looking for a brighter future yet being disappointed.